

ԱՐՏԱՎԱՐՄԱՆԵԱՆ ՔՐՈՍԻԿ

Պարիչի գրաքննութիւնը և Թատրոնական գրածքների Անիշխտնականները և Ռաւաշոլը Պիեռ Լոտի՝ ակադեմիկոս Խտարական համալսարանականները, Սմէշխով Շառը Խտարական նոր գրքերը, Մանեսեպացցայի ցուցականդէսը, Գերմանական գործադրական նոր օբիւնագիծ հետեանքները, Բողոքական մի նոր տաճար Անդրլինում, Ընկերվարական հասարակութիւնը գուլ XX դարում ըստ Խօսեն Ռիխտերի, Առնդունի խորհրդարանի նոր անդամները, Առնդունի ընական մարմինը և արևեստականը, Ածխահան բան որների զ սրծազ ու լուները, Մ. Զերագ՝ 13 ապրիլի Folklore'ի յոդովին, Մ. Զերագի զասախոսութիւնը 1891 թ. Ճայտի 6-ին, Առաջին պրեւատ զոցենս տիկին Կեմային:

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը նորերս մերժեց այն օրինագիծը որ առաջարկում էր Յ տարու վերացնել թատրոնական գրածքների ցենզուրան որը՝ ի դէպ ասած Պարիզում Անաստազիէ¹⁾ կող անունով է կոչւում Յատկապէս ալս խնդիրը ուսումնասիրելու համար կազմած լանձնաժողովի զեկուցումից — ի թիւս ալլ հետաքրքիր տեղեկութիւնների — երեաց որ Ֆրանսիալում թատրոնական ցենզուրան ծնունդ է է առել 789 թ. Կարլոս Մեծի (Charlemagne) օրով և որ ալնունեան «տիկին» ցենզուրան առաջ զնալով — խստացել է մինչև ծալրակեղութեան և ծիծաղարժ չափազանցութեան, Նոյն զեկուցման մէջ առաջ է բերած Մելլակի²⁾ «Գեղեցիկ Հեղինէի հեղինակի» կարծիքը — մի հեղինակի, որին չի կարելի մեղադրել ամօթխած ութեան (prudeur) չափազանցութեան մէջ, «Թատրոնական գրաքննութիւնը պէտք է անպատճառ պահպանել, ասում է Մելլակը, Հասարակութիւնը, ամբոխը սիրում է գարճախօսութիւններ (gauloiseries) և երիտասարդ հեղինակները՝ ճանաչելով ալս թուլ երակը — գալթակդած կը լինին օգտւել ալս հանգամանքից և մէջ բերել իրանց գրւածքներում թէ կասկածելի խօսքեր և թէ դրութիւններ՝ եթէ չը զգան գրաքննութեան սանձը»:

Անիշխանականների ձեռքով Պարիզում դործող պալթումները միանգաման գրաւել են բոլոր աշխարհի ուշաղրութիւնը, Պարիզի բնակիչները

¹⁾ Madame Anastasie.

²⁾ Meilhac.

և հազարատը օտար երկրացիք սարսափահար են եղել. այս վերջինները շտապում են թողնել Ֆրանսիակի անհիւրներակալ և առաւոր դարձած մակար. քաղաքը Անգլիանականների այս սարսափ գցող միջոցների առաջն առնելու համար հանրապետական կառավարութիւնը մտածում է լանցատուններին մահան պատճի ենթարկել. Մարտ 15/27 Կիլիլ փողոցի պալեթումի հեղինակը արդէն զատաստանի ձեռքին է. Նրա անունն է Ռաւաշոլ Ակս իսկ բայցին հեռազիրները լավագում են թէ Ռաւաշոլը խոստվանել է թէ ինքն է պալթումներ գործել թէ Սևն-Ճերմնին բուլարում և թէ վիշեալ Կիլիլ փողոցում. Նրան ենթարկել են մշտենչենաւոր աքսորի.

«Տան» լրագիրը հաղորդում է, որ Պարիզի բոլոր 20 թաղերում (բացի IX-ից) անիշխանականների մի-մի կամ երկու-երկու խմբակներ կան 50—60 մարդուց քաղկացած։ Բացի այդ կան նաև երկու միջազգային խմբեր ամեն մէկը 200—300 հոգուց։ Պարիզում բոլոր անիշխանականների թիւը ըստ ոմանց 3000 է, ըստ ալլոց 10,000։ Վերջին բոպէին քաղաքնեց որ ան հիւրանոցը, ուր ձեռքակալելի էր Ռաաշոլը, օղն է ցնդել Անկասկած է, որ սա անիշխանականների վիճակն է։

Սարսափը ան աստիճան ընդհանուր է, որ բոլոր կառավարութիւնները՝ Խաղաղիակում, Ֆրանսիակում, Գերմանիակում, Խոտալիակում հրամանենք են արձակել լատինի անիշխանականներին կալանաւորելու Նոյն խակ Անգլիան, որ մինչև ափմ անպայման ապաստանարան էր տալիս անի, խանականներին՝ մոտառնջութեան և տառանմունքի մէջ է.

— Ֆրանսիական ակադեմիկոսները սակախն ակադեմիական ստուճա-
սրատութեամբ և անտարբերութեամբ դէպի քաղաքական ալս վերջին անց-
քերը՝ ապրիլի 7-ին մի տօն ունեցաւ.

Աղդ առնը մի նոր անմասի՝ արգէն անմաս հռչակածների շրջանի մէջ ընդունեն էր, և ադ նոր անմասը Պիեռ Լոտիկ'ն է,

Ակադեմիական ապահովի տօնը կատարում է միշտ շատ փառաւոր կերպով: Ըստ սովորութեան նորընծագ ակադեմիկոսը մի գովասանական ճառասաց ի պատիւ իւր նախորդի, այն է Օկտու Ֆեօքէ՛լ¹):

Նորընծափի ապ ճառը շատ հետաքրքրական է իրբն բնորոշ լոտի՛կ ընաւորութեան, Պիեռ Լոտին իւր ապ ճառի մէջ գործածեց՝ ևս բառը 175 անգամ և նույն բառը հօղովից 137 անգամ²). Ակազեմիկոս Մեղինուը, որին վիճակած էր պատասխանել լոտի՛կ ճառին՝ պարզ կերպով ասաց թէ՝ իւր վրա եղած պարտաւորութիւնների մի մասը ինքը ճառախօսը կանձն

¹⁾ Octave Feuillet. *in* «*Успѣшнъ № 2.* 1891 г..

²⁾ Ուղիղ հաշեք սա է՝ je (ես) – 175 անդամ տօն (Տոկնալէս՝ ես) mon, mes (իմ՝ եռակի և հոգնակի) – 137։

առաւ ինքն իւր մասին խօսելով, Արագիրները շտափեցին արձանագրել թէ Ալտի՞ն գովասանական մի ճառ արտասանեց ի պատիւ Լոտի՞նու.

Խօսելով Օկտոա. Ֆեօդէի մասին — Լոտին ասաց որ ինքը գրեթէ երբէք չի կարգում գրքեր, որովնեան գրքում լաւուած որ և է միտքը նրան զգւելի է, Նա արհամարհանք արտալաբուց դէպի եղած գրականական բոլոր ուղղութիւնները, շկոլաները և մասնաւորապէս դէպի Զոլավինը, Նա իրան կուսակից անանեց Ֆեօդէի գիտէալական ուղղութեանը մի հեղինակի, որի դրւած քններին Լոտին գուշակեց մշտական լաջողութիւն.

Լոտիի իսկական անունն է Ժիվին Վիո, Նա ալժմ 42 տարեկան է, 1867 թից գրեւէլ է նաւասարի և մինչև 1890 թիւը ծովագին ճանապարհորդութիւններ է արել՝ Հիւսիսավին և Ատլանտիկ ծովերամ, եղել է Սենեգալում, Պուրում, Տոնկինում, Խավոնիալում,

Իւր առաջին սիրահարութիւնը Տափի կղզիներից մինի վրա մի թուխ զեղներես գեղեցիուունու հետ — նա նկարագրել է մի ռոմանում, որի հերոսին և անւանել էր Լոտի, Անունեան Վիո՞ն պահպանել է իւր այդ ծածկանունը, իրը ծովագնաց և վիպասան նա լաջողութիւն ունի Պարիզի բարձր շրջաններում. բաց գրականագէաների և ծովագնացների համակրութիւնները նրա կողմը չեն, Նրա բնաւորութեան բնորոշ լամկութիւնն է իրան ցոյց տալը և մնափառութիւնը, որը անսահման է,

Նրա միւս նշանաւոր գրւածներն են Սպագի ռոմանը, Խալանդիակի ձկնորսները (Pêcheur d'Islande) և Նուպիէլ Ռեվիւկ ամսագրում տպող Fantôme D'Orient.

Ի գէպ՝ Պիեռ Լոտին տեղ է գտել Արշակ Զորանեանի վերջերս լուս ընծակած «Արշալուսի ձաներ» գրքի մէջ, մի հանգամանք որ բնորոշում է նաև հայ հեղինակին:

—Գրեթէ ամեն բարեկենդանին՝ ուրախ և զւարճալի կարնաւալի օրերին՝ լոտալական համալսարանների ուսանողները անկարգութիւններ են անում, անկարգութիւններ, որոնք ունին մի աստառ և որ մեղանից շատ շատերին անլաւտ է, լոտալական համալսարանների հնացած և վատ կազմակերպութեան մասին առաջին վեցամետակի մկրտում լուսաւորութեան մինիստր Վիլլարի՞ն (Villaré) ասել էր դիմնլով ուսանողներին խւր մը նսմակով. «Շատ ցանկալի և շատ զգալի է դառել համալսարանական մի վերանորոգութիւն. ես լուս ունեմ շուտով դրա վերաբերեալ մի օրինագիծ ներկալացնել պարլամենտինու, և լիրակ՝ իտալական շատ համալսարաններում ընդունակ և պաշտամ պրոֆեսորների կողքին կան շատ երիտասարդ և անփորձ մնափառներու Միւս կողմից համալսարանի կանոնները շատ բժամնդիր են (tracassier). ուսանողը պարտաւոր է սովորել նաև շատ անկարենոր բաներու Դիմնագիական նորաւարտը համալսարան մանելով շատապում է ստանալ ազատութիւն, մեծ դին զնելով իւր քաղաքացիական արժանաւորութեան և իւր մարդկակին իրաւանց լան-

կարծ սովիպւած է լինում լաճախել ը ու լոր դ ա ս ե ր ը և տարբեկան քննութիւններին ենթարկված է ամար-սովիպւած է ներկալացնել վկալաթուղթի վշեալիք մասին, Արագիսի վարժուածքից վրդովւում ապատամբուում է ուսանողի հպարտութիւնը և ապա ինքը ուսանողը Ահա այս ուսանողներին դիմուլով դը Ամիլիոը¹⁾, մի ճառ ասաց Ընկերվարութեան մասին, Երբ նոր վերմիկրուած մէկը նա խօսում է իւր բնաբանի վրա շատ ոգեսորւած կիրապով ապագան պատկանեցնելով ակտ նոր վարդապետութեան,

կերպով առաջ գրքերից ուշադրութեան արժանի են ողին Ամբիոն
— Խտալական նոր գրքերից ուշադրութեան արժանի են ողին Ամբիոն
մի հասորը որ հափրէն կարելի է թարգմանել՝ Ուսումնարանից Տուն և
Տանից—Ուսումնարան ²⁾ Այս հասորի մէջ հեղինակը իրան լատում չորրու-
թով նկարագրում է մնջանից ամեն մէկին կիշողութիւններով թանգ՝ ան-
փոխարինելի և անմիշադարձնելի մանկութեան օրերը՝ մանկական խաղե-
րով հանաքներով և դւարձութիւններով, որոնք տեղի են ունեցել՝ իէ
ասանը թէ ուսումնարանում և թէ սրանց իրար հետ կապող ճանապարհի
վրա Նոյն հեղինակը ալժմ պատրաստում է մի ալ զիրք «Մագիստ մէկը»
³⁾ վերնագրով որ անհամբեր սպասում է և որ անշուշտ մնծ աղմուկ կը հանի
թէ Խոտալիալում և թէ Խոտալիակց դուրս Խնքը հեղինակը զարմանք է
լաւանել թէ ալդ ինչպէս ինքը մինչև հիմա ուրիշ բաների վրա է դժմէ, Մի
ուրիշ՝ շատ պտղաբեր և հոչակւած Խոտալցի զրող որ սական գրեթէ ան-
լար է մնացել հայ հասարակութեանը՝ Պատօ Մոնտեգացան մի զիրք է
հրատարակել «Գեղեցիկ բաների բառարան» ⁴⁾ վերնագրով, Այս զիրքը
հետաքրքիր է նրանով որ ամենալն զուիս ալլուրենական կարգով բառեր է
պարունակում, որոնք հեղինակի կարծիքով գեղեցիկ են, — ախաղէս որ ըստ
հեղինակի կան գեղեցիկ և ոչ գեղեցիկ բառեր. Մէջ են բերած միմիան
սպեկեցիկ բառերը իսկ չը վշտաճները գեղեցիկները չեն, Գեղեցիկ բա-
ռերը զբաւած են ալբուքենական կարգով. ագաթ, ակացիս և ալպն, Ամե-
նալն մի պրակի վերջում կան կտորներ, ցիտատներ զանազան բանաստեղծ-
ներից:

Նոր հիղինակը ամուսնացել է Նորելու և մի գիրք է խոստացել թէ
ալ՝ նույս պէտք է կին առնելու

Նորեւն Ֆլոբենցիալում մի հոգեբանական ցուցանանդէս է բացմէ
ամենայն մի զգացմունքի բաժնի դէմ ի ցուց էին դրւած համապա-

¹⁾ M. de Amicis-ը ծանօթ է հայ ընթերցողին պ. Փ. Վարդանեանի թարգմանութիւններով. Ամիշխար Սիրտուք լուս է տեսել նորելու 136 տպագրութեամբ:

²⁾ Era Scuola e Casa (Между школой и домом).

³⁾ Բանվարների տօն օրը:

^{*)} Dizionario delle cose belle, da Paolo Montegazza. Milano, 1892.

առախիսան իրերու Ակտպէս օրինակի համար — ունալնութեան հանդէպ զրւած էին կանանց կրինոլիններ և ալլ զրանց նման բաններ.

Նւ ալս ցուցահանդէսի հեղինակը, գլուխ բերող - սարքողը էլի վիշեալ անխոնջ զիտնական Մոնտեզացցան¹⁾ է.

Գերմանական զարոցական նոր օրինագիծ օրինողները որոնք ուզում էին կոմել լուղարով հոսանքի զէմ — կոմս Ցեդլից (Zedlitz) և գններալ Կապրիւխն — տւին իրանց հարաբարականները. Սակայն թագաւորը ընդունեց միան առաջնունինը, իսկ գեներալը դեռ շարունակում է պահպանել Բիրմարկի տեղը. Նու վերցնելով առաջարկւած օրինագիծը և ակսպիսով պարտութիւն կրելով գերմանական պարլամենտում՝ գերմանական կամրը լաղթութիւն է տարել պրուսական լանդատարում, ուր նորերս ընդունւեց տասը միլիօն մարդի կրեդիտը ան բողոքական տաճարի համար որի կառուցանելու փափագը լաւանել էր հանգուցեալ Վիլհելմ I 1867 թ. իւր մի դեկտիսով. Հանգուցեալ Ֆրիդրիխ կայուր իւր կարճատե թագաւորուեան միջոցին նմանապէս չը լաջողեց զլուխ բերել իւր հօր ցանկութիւնը. Տաճարի կառուցանելը ակսպիսով իրագործում է Վիլհելմի թուը. Հնոց որ լաւսնի եղաւ կրեդիտի ընդունւելը, իսկուն տեղացին ընկերվարականների և հրէաների լարձակումները. Բնչպէս, աղաղակում են սրանք, — տասը միլիօն մի հկեղեցու համար.

Ակս երկու կուսակցութիւնները համերաշխ են երբ խօսքը անցեալի և ներկաի վերաբերեալ է, — բաց ոչ ապագալի. Ակս երեաց ան ընդունելութիւնից, որ արին հոչակատր առաջադիմական պատգամաւոր էօֆեն, Ռիխտերի նոր լուս ընծալած երգիծաբանական մի գրածքին, որի վերնադիրն է «Ապագավի ընկերվարական պատկերները»²⁾.

Ակս սատիրավի մէջ Ռիխտերը իրագործւած է ներկաւացնում XX-րդ դարում ան սկզբունքները, որոնք ընդունւեցան կրթուրափ ժողովում և որոնք տեսչանք կարող են համարմել Բերելի, Լիբլնեխտի և ալլ ընկերվարականների.

Ամենից առաջ բանելը (работа) պարտաւորեցուցիչ է ամենքին — ան է արական և իգական սեռի՝ 21 մինչև 65 տարեկան ունեցողներին. Եթէսպէս և պատանիները ուստամ են առնում հասարակաց ուսումնարաններում պետական ծախքով. ծերերը և պատաները ապաստանում են պետական ապաստանարաններում, Բոլոր շարժական և

¹⁾ Մոնտեզացցալ հետեւեալ աշխատութիւնները թարգմանւած են ռուսերէնի՝ Խորան Ենք. Էկстазы человека, Счастье и трудъ, Большая любовь. Лицемерный вѣкъ и азъ.

²⁾ Sozialdemokratische Zukunftsbilder.

անշարժ գույքը և դրամագլուխը դառնում են համակական (collectivité)։ Բոլոր տոկոսաբեր թղթերը, արժետումները և ալին և ալին ոչնչացնում են, թափած դրամ՝ ուղի թէ արծաթ և թէ թղթադրամ չը պիտի լինի, և վարձատրութիւն իրանց աշխատանքի քաղաքացիները կը ստանան միան մի ամսով (այս կէտը նախատեսնւած է՝ ալսպէս թէ անպէս հարատութիւն դիզելու առաջըն առնելու համար)։

Տները և հողերը տէրութեան սեփականութիւն կը լինին, հնակարանները բաժանում են վիճակով։

Թերլին քաղաքը տնօրինում է ալսպէս, հաշվի է առնուում թէ ինչ-քան տուն և սենեակ է հարկաւոր վարչութեան, ապաստարանների, արհեստանոցների, ընդհանուր ճաշարանների և ալլ հաստատութիւնների համար Դիցուք տակին մնում է 1 միլիոն սենեակ։ Ապա բոլոր բանողները՝ ան է 21—65 տարեկանները կստանան մի-մի սենեակը Մնացեանները կ'ապրեն համանքով, Ամուսինները կարող են ոմենալ իրար կից սենեակներ Քաղաքում կը լինեն հազար ճաշարաններ և ամեն մէկում հազար դրացիներ ճաշ կը ստանան, ճաշում են կէտօրից մինչև ժամը վեցը ամենօտ ճաշարանում ճաշասուն մտնելիս գույք ստանում էք մի թւակիր տոմսակ և սպասում ձեր հերթին, Որովհետև սպասողների թիւը մեծ է, ուստի պէտք է շտապ ուսուել ապա թէ ոչ վերակացուն կը խնդրի որ զուք վերջ դնէք ձեր որոճման, ճաշի խորտիկների ցուցակը կազմած է առանձինու լատուկ մինիստրութիւնից, որը գիտնականապէս որաշում է ազտապին և ալբումինալին նիւթերի անհամեշտ քանակութիւնը երջանիկ բերլինցիների, հանապազորեակ ճաշի մէջ և ալսպիտով կատարեալ հաւասարութիւնը։ Կերակուրի նուն քանակութիւնը և որակութիւնը, մինոն ճաշարաններում և միննոն ժամին, Ակա բոլորից վատու զալիս է ապա մթնոլորդի միջից մէկի պատմութիւնը, ան է մի նախոկին կազմարարապետի Աս լողգրիկ էք ընկերվարութիւնը մեծ ողնորութեամբ և խվոն հիամբակիւ տեսնելով իւր լուսախարութիւնը։

Նրան հեռացրին իւր հօրից և իւր զաւակներից Նա ալլ ես չի կարող ձեռք բերել իւր զօքանչի ձեռքով կոպէկ-կոպէկ հաւաքած մի քանի հարիւր բուրլու օժիտը, Առաջ ինքը տէր էր—ալժմ մշակ է դառնել իւր բոլոր ոճնեցածից նրան թողել են միան մի անկողին, Յ հատ աթոռ, մի սեղան և մի պահարան, Նրան նշանակել են վերակացու արհեստանոցում ուր մշակները զալիս են միան ժամանակ սպամնելու համար Գանի որ զինը մէկ է՝ ոչ ոք մշակներից չի աշխատում ինամքով և չնորհքով բան չինել, Վատնում են միմիան ժամանակը, փչացնում և գողանում նիւթերը և գործիքները, Ակ խեղճ կազմարարի փոքրիկ աղջկան անսպէս լաւ են ինամել ապաստանարանում որ նա անտեղ մեռնում է, իսկ մեծ տղան բաջողում է փախչել Ամերիկա, ուր ընկերվարութիւնը կարմար հող չէր դանել իւր համար, Քանի որ գիւղացիներին զոռով են ստիպել նոր կար-

գերը՝ երկրի մէջ եղած դժգոհութիւնը գնալով ընդհանրանում է, Նրկրին կորուստ և մանակութիւն է սպառնում. Դրաից ոչ մի ապրանք չի պահանջում մինչև ան աստիճան վաս են պատրաստում ալժմ երկրի արդիւնաբերութիւնները:

Դրութիւնը գնալով դառնում է անաանելի. արտահանութեան պակասը լրացնելու համար ստիպում են բանել 14 տարեկանից 75 տարեկաններին. Ազդ ևս չի օգնում. Ծովութիւնը վարակում է ամենքին. Առաջ են գալիս զանազան կուսակցութիւններ, ոմանք պահանջում են վերադարձ դէպի հինը, ոմանք աւելին են պահանջում քան ինչ որ է. Ներաբեղի է ոճենում մի ապստամբութիւն, Դրաից լրձակում են թշնամիները. Բայց ապանդ կորում է պատմութիւնը, որովհետեւ պատմող կազմարար դեղակահար եղած մնոնում է Ռիխտերի ցանկութիւնից...

Անկասկած գորանով Ռիխտերը մնեց բան չ'ապացուցեց:

—Ամենքը և մանաւանդ իրանք լոնդոնցիք շատ զարմացան, երբ քաղաքակին խորհրդարանի նոր անդամների $\frac{3}{4}$ ընտրւեցան անբարտ առաջադիմականներից. իսկ մնացեալ $\frac{1}{4}$ դարձեալ անծանօթ չափաւորականներից. Մինչդեռ Լոնդոնը թէ պարզամնատի համար և թէ վշեալ իւր խորհրդարանի համար ընտրում էր միշտ դիրք ոճեցող և լավոնի պահպանողականներին:

Այս ընտրութիւնները, որ զլխաւորապէս լաջողցրել են քաղաքական կլուքները—լուս է տալիս Գրադատոնի կուսակցութեան թէ նոն ուղղութեան մարդիկ կընտրեն նաև 1893 թ. պարզամնատի համար:

—Ամենաէն ընթերցող Լոնդոնի մասին խօսելիս անպատճառ պէտք է մտաբերի Լոնդոնի տիեզերահոչակ մառախուղը, ան բնական մառախուղը, որի գէմը առնելու միջոցներ զեռ չեն գտնած և որը, բացի մարդկակին զոհերի պատճառ լինելուց, նաև ծախսքի մէջ է զցում՝ քաղաքը օրը ցերեկով լուսաւորելու համար:

Բանից գուշա է զալիս, որ բացի այդ բնական մառախուղից, մի ուրիշ արևետական մառախուղ ևս կաէ Լոնդոնում, որը առաջինից ոչ պակաս վնասակար է և զօրեղ:

Ազդ արևետական մառախուղը Լոնդոնում սպառւող քարածուխից առաջացած ծուխ ու մուխն է: Լոնդոնը սպառում է թէ իւր գործարաններում և թէ տան օջաղներում և վառարաններում տարեկան մօտ 420 միլիօն փութ քարածուխ. օրեկան ասել է մօտ $1\frac{1}{2}$ միլիոն փութ. Որպէս զի աս թմբը չափազանցրած չը թւն, շտապենք ասելու որ մօտ $4\frac{1}{2}$ միլիօն բնակիչ ունեցող քաղաքը իւր մէջ ունի 800.000 տուն. Որեկան միլիոն փութ ալբուղ ածուխի ծուխը բնական մառախուղից պակաս չէ, չաշած է, որ այդ ծուխը պարունակում է իւր մէջ 12.000 փութ փուխ-

յած ածուխ, Աւ ապա ապ ամենը, թէ ծծմբակին ծուխը և թէ փոշիա-
ցած ածուխը նստում է տանիքների վրա, պատուհանների վրա, տարած-
ում ամենափառ տեղ և լցնում մարդկանց թոքերը, Լոնդոնի չնչելու օդը
ապականում է քարածուխի ալրմելուց և առաջացնում տարիեկան մօտ 4
միլիոն փուխ ած խաթթու, թեթև եղանակացնողները կը բացականչին թէ
մարդիկ ուրեմն պէտք է կոտորւեն Լոնդոնում - մինչդեռ իրողութիւն է, որ
Լոնդոնը ամենաքիչ մահացութիւն ունեցող քաղաքներիցն է, Ըսթերցողը
տեսաւ թէ ինչ անազին քանակութեամբ է սպառւում քարածուխը Լոն-
դոնում և չի զարմանալ որ անգլացիք ամենափառ անգամ շատ վատ և
անելքնելի դրութեան մէջ են լինում, երբ, ինչպէս նորերա, ածխան-
քերում՝ ալ և ալլ պատճառներից դրդած - գործադուլներ են պատճուում,
Վերջին անգամ գործազուկ արածների թիւը հասնում էր 400.000-ի. Ինչ
ասել կուզի որ ամենից շատ, ինչպէս միշտ և ամենափառ դէպքում, վաս-
տում են չքաւորները գործադուլի պատճառով քարածուխի թանգանալով:

Եմուստամբ հաստատւած անխոնջ Ա. Զերազ՝ ներկայ գտնմլով ն. ա.

13 Ապրիլի Folklore'ի ժողովին խօսել է հանգուցեալ Մկրտիչ Հմինի, ալժմ հանգուցեալ Սարգիս Սարգսեանցի և Գարեգին Վ. Սրբանձրեանցի աշխատութիւնների մասին, Ընդամեն նա առաջարկել է ընկերութեան սէւր թէ Ս. Սարգսեանցի «Զօկերի բառքառ» աշխատութիւնը և թէ վիշեալ Յ հակերի լուսանկարները, որնք եւ ընդունել են նորհակալութեամբ։ Այն դասախոսութիւնը որ Մ. Զերազ 1891 թ. մայիս 6 արել էր Մանշեստրի Ալիսարհագրական ընկերութեան անդամների առաջ՝ նոյն այդ դասախոսութեան մի մասը վիշեալ ընկերութեան հրատարակութեամբ նորմը լուս է տեսել հանդերձ Հայաստանի մի քարտէզով։

Մինչ ակտ մինչ այն՝ փոքրիկ Զավերիան առաջ է ընթանում առաջադիմական շաղով, Ցիւրիխի համալսարանը որը, քամանեթ տարի սրանից առաջ (1864 թ.) առաջինը բաց արաւ իւր գոճերը գեղեցիկ սեռի համար—ընդունել է իւր դասախոսների շարքում իր պրիատ դոցենտ (պրոֆեսոր) թեան առաջին աստիճանը) տիկին Կեմպինին (Kempin), որի առաջին դասախոսութիւնը տեղի է ունեցել ն. տ. մարտի 5:

三